Երկրորդ ընթերցում
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Կ-519[1]-20.03.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 182[3] հոդվածում՝

1) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Լրատվական գործունեություն իրականացնողի կողմից արտակարգ դրության ընթացքում սահմանված տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին մասով.

«8.1. Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված տույժին ենթարկվելուց հետո մեկ օրվա ընթացքում արտակարգ դրության ընթացքում սահմանված տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնների խախտմամբ տարածված հրապարակումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մաս.

«10. Արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում որպես սահմանափակում նախատեսված մեկուսացման կամ

ինքնամեկուսացման կանոնները կամ ազատ տեղաշարժվելու իրավունքի այլ սահմանափակումները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհինսնապատիկի չափով:»:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ մաս.

«11. Սույն հոդվածի 10-րդ մասի իմաստով մեկուսացում է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումը դրա համար նախատեսված որոշակի տարածքում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը բացառելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

Սույն հոդվածի 10-րդ մասի իմաստով ինքնամեկուսացում է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումը իրենց մշտական բնակության կամ իր նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտակարգ դրությունը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում հայտարարվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև նրանց պաշտոնատար անձանց

գործունեության իրավական հատուկ ռեժիմ է: Նույն հոդվածի 2-րդ մասն ամրագրում է առ այն, որ արտակարգ դրությունը հայտարարվում է միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին անմիջական վտանգ սպառնալու դեպքում, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կամ տապալելու, իշխանությունը զավթելու փորձերը, զինված խռովությունները, զանգվածային անկարգությունները, բռնի գործողություններով ուղեկցվող ազգային, ռասայական, կրոնական հակամարտությունները, ահաբեկչական ակտերը, հատուկ նշանակության օբյեկտների գրավումը կամ շրջափակումը, անօրինական զինված միավորումների ստեղծումը և գործունեությունը, **արտակարգ իրավիճակները**:

Նշված հոդվածից ուղղակիորեն հետևում է, որ արտակարգ դրություն կարելի է հայտարարել արտակարգ իրավիճակի առկայության դեպքում: **Որպես այդպիսի իրավիճակ է համարվում որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակը, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման:**

Արտակարգ իրավիճակը կարող է անմիջական սպառնալիք հանդիսանալ սահմանադրական կարգի համար՝ վտանգելով սահմանադրական կարգի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված սոցիալական պետության բաղադրիչը:

Հաշվի առնելով **Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանված՝ մարդու, որպես բարձրագույն արժեք հանդիսանալու սահմանադրական կարգավիճակը՝ վերջինս պետությանը պարտավորեցնում է միջոցներ ձեռնարկել անձանց կյանքի ու առողջության պաշտպանության համար:**

Արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում արտակարգ դրության ընթացքում արտակարգ դրության տարածքում պետությունը կարող է իրականացնել մի շարք միջոցառումներ և կիրառել իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումներ: Օրինակ, **պետությունը կարող է սահմանափակել անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը. ազատ**

տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը բխում է պետության և հասարակության օրինական շահերից, քանի որ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը կամ դրա առանձին դրսևորումները կարող են կանխել, օրինակ, ջրհեղեղի, քիմիական կամ կենսաբանական զենքի օգտագործման արդյունքում առաջացնող հնարավոր հետևանքները, օրինակ՝ վարակը կամ համաճարակը և չնպաստել դրա տարածմանը: Պետությունը կարող է ձեռնարկել մարդկանց անվտանգությանն ապահովմանն ուղղված այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք անձանց մեկուսացումն ու ինքնամեկուսացումն են:

Արտակարգ դրության ընթացքում կիրառվող ցանկացած սահմանափակումների անշեղ չկատարումը կարող է վնաս հասցնել այնպիսի կարևոր արժեքների, ինչպիսին մարդու կյանքն ու առողջությունն են, բնակչության առողջությունը:

Վերոգրյալի համատեքստում հարկ է փաստել, որ գործող օրենսդրությամբ առկա չէ համարժեք գնահատական արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումները խախտելու կամ անձանց անվտանգության ապահովմանն ուղղված մեկուսացման և ինքամեկուսացման կանոնները չպահպանելու համար: Մինչդեռ, այդպիսի սահմանափակումները կամ կանոնները խախտելը ոտնձգում են այնպիսի սոցիալական արժեքի դեմ, ինչպիսին բնակչության առողջությունն է:

Հիմքում ունենալով պետության՝ բնակչության առողջությունը քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական, բժշկական, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային բնույթի միջոցառումների միջոցով ապահովելու պարտականությունը, հաշվի առնելով նշված կանոնների և սահմանափակումների պահպանման անհրաժեշտությունը և դրանք խախտելու դեպքում վրա հասնող բացասական հետևանքները՝ առկա է սոցիալական անհրաժեշտություն արտակարգ դրության ընթացքում հասարակության շահերից բխող սահմանափակումները չկատարելու և դրանց հետևանքով մարդու առողջությանը վնաս պատճառելու նկատմամբ խստագույն վերաբերմունք դրսևորելու և պատասխանատվություն, իսկ հանրորեն առավել բարձր վտանգավորություն ունեցող արարքների դեպքում՝ քրեական պատասխանատվություն նախատեսելու համար:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով համաշխարհային մակարդակում ընթացող զարգացումները և այնպիսի վարակների տարածումը, որոնք կարող են կյանքի կամ բնակչության առողջության համար վտանգավոր լինել՝ պետությունը

պետք է ձեռնարկի միջոցներ նաև այս տեսանկյունից՝ այդպիսով պաշտպանելով մարդու առողջությունը: Վերջին զարգացումները թույլ են տալիս առանձնացնել, օրինակ, նոր կորոնավիրուսային վարակը (2019n-CoV): Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունից հետևում է, որ ներկայումս առկա է վարակվածության շուրջ 335.000 դեպք, որից շուրջ 15.000-ը մահվան ելքով: Կյանքին կամ բնակչության առողջությանը էական վնաս պատճառող համաճարակային նման վարակով վարակվելը անձի առողջությանը կարող է պատճառել վնաս՝ ընդհուպ հանգեցնելով մահացության: Ուստի, քրեաիրավական գնահատական պետք է տրվի նաև այնպիսի դեպքերին, երբ անձն այլ անձի դիտավորությամբ վարակում է նոր կորոնավիրուսային վարակով (2019n-CoV):

Համապատասխան գնահատական պետք է ստանան նաև այն արարքները, որոնք թեև չեն ոտնձգում նման կարևոր արժեքների դեմ, ինչպիսին մարդու և բնակչության առողջությունն է, բայցև խաթարում են արտակարգ դրության ռեժիմը:

2. Կարգավորման նպատակը և բնույթը

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մշակվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով առաջարկվում է պաստասխանատվություն սահմանել **արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում որպես սահմանափակում նախատեսված մեկուսացման կամ ինքնամեկուսացման կանոնները կամ ազատ տեղաշարժվելու իրավունքի այլ սահմանափակումները խախտելու համար:**

Առաջարկվում է գործող օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ **որպես զանցանք նախատեսելով լրատվական գործունեություն իրականացնողի կողմից արտակարգ դրության ընթացքում սահմանված տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով:**

Առաջարկվում է գործող օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին մասով.

«8.1. Սույն հոդվածի 8-րդ կետով նախատեսված տույժին ենթարկվելուց հետո մեկ օրվա ընթացքում արտակարգ դրության ընթացքում սահմանված

տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնների խախտմամբ տարածված հրապարակումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:»:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով **առաջարկվում է թիրախավորել երկու օբյեկտ՝ մարդու առողջությունը և բնակչության առողջությունը:** Ըստ այդմ՝ առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի **«Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունները: վերտառությամբ 16-րդ գլուխը լրացնել նոր՝ 124.1-ին հոդվածով՝ քրեական պատասխանատվություն նախատեսելով նոր կորոնավիրուսային վարակով (2019n-CoV) վարակելու համար:** Ընդ որում՝ եթե արարքը կատարվել է երկու կամ ավելի անձանց նկատմամբ կամ անչափահասի նկատմամբ կամ ակնհայտ հղի կնոջ նկատմամբ կամ անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, ապա դրանք կդիտարկվեն որպես արարքը ծանրացնող հանգամանքները:

Միաժամանակ, առաջարկվում է **«Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 26-րդ գլուխը լրացնել նոր՝ 277.1-ին հոդվածով՝ քրեական պատասխանատվություն նախատեսելով արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում մեկուսացման կամ ինքնամեկուսացման կանոնները կամ ազատ տեղաշարժվելու իրավունքի այլ սահմանափակումները խախտելու համար, որն անզգուշությամբ առաջացրել է անձի վարակում:** Եթե նման կանոնների կամ սահմանափակումների խախտումը **անզգուշությամբ ծանր վնաս է պատճառել մարդու առողջությանը կամ անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց վարակում կամ անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, ապա դրանք կդիտարկվեն որպես արարքը ծանրացնող հանգամանքներ:**

Հիմքում ունենալով իրավական որոշակիության սկզբունքի պահպանման պահանջը՝ և՛ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում, և՛ Քրեական օրենսգրքում առաջարկվում է սահմանել «մեկուսացում» և «ինքնամեկուսացում» հասկացությունները[1]: Այսպես, «մեկուսացում» է

[1] Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ հարկ ենք համարում նշել, որ Սահմանադրական դատարանը վերահաստատում է ՍԴՈ-1176 և ՍԴՈ-1213 որոշումներում արտահայտած իր հետևյալ իրավական դիրքորոշումները. «... իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» և «... իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից

համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումը դրա համար նախատեսված որոշակի տարածքում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը բացառելու և վարակի տարածումը կանխելու նպատակով: «Ինքնամեկուսացում» է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումը իրենց մշտական բնակության կամ իր նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք

Նախագծերը մշակվել են Արդարադատության նախարարության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունմամբ կապահովվի արտակարգ դրության իրավական ռեժիմի պատշաճ կատարումը, կստեղծվեն անհրաժեշտ նախադրյալներ մարդու առողջության և բնակչության առողջության դեմ ուղղված ոտնձգությունների նկատմամբ համարժեք գնահատական տալու համար:

մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի նախագծերի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

Առաջին ընթերցում

Կ-519[1]-20.03.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 182.3-րդ ~~հոդվածը~~հոդվածում՝

1) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Լրատվական գործունեություն իրականացնողի կողմից արտակարգ դրության ընթացքում սահմանված տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին մասով.

«8.1. Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված տույժին ենթարկվելուց հետո մեկ օրվա ընթացքում արտակարգ դրության ընթացքում սահմանված տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնների խախտմամբ տարածված հրապարակումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:»:

~~1~~3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 10-րդ մասով.

«10. Արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում որպես սահմանափակում նախատեսված մեկուսացման կամ ինքնամեկուսացման կանոնները **կամ** ազատ տեղաշարժվելու իրավունքի այլ սահմանափակումները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով:»:

~~«10. Արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ժամանակ մեկուսացման կամ ինքնամեկուսացման պահանջները խախտելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչեւ հինգհարյուրապատիկի չափով:».~~

~~2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 11-րդ մասով.~~

~~«11. Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից արտակարգ դրության ժամանակ սահմանված տեղեկությունների հրապարակման կամ տարածման սահմանափակումները խախտելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ երեքհարյուրապատիկի չափով:»:~~

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ մաս.

«11. Սույն հոդվածի 10-րդ մասի իմաստով **մեկուսացում է համարվում անձանց, այդ թվում՝** հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումը դրա համար նախատեսված որոշակի տարածքում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը բացառելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

Սույն հոդվածի 10-րդ մասի իմաստով ինքնամեկուսացում է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումը իրենց մշտական բնակության կամ իր նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ Կ-519-20.03.2020-ՊԻ-011/0 ԵՎ «ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ Կ-519[1]-20.03.2020-ՊԻ-011/0 ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	**ԱԺ պատգամավոր Սուրեն Գրիգորյան**	«ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ 1) հոդված 1	Նախագծով առաջարկվող 124.1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 124.1. Նոր կորոնավիրուսային վարակով (2019n-CoV) վարակելը** 1. Անձին նոր կորոնավիրուսային վարակով (2019n-CoV) վարակելը՝ պատժվում է	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: 2. Նույն արարքը, որը կատարվել է՝ 1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ, 2) անչափահասի նկատմամբ, 3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:		

			3. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամետով:»:		
2		«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (Նախագիծ 2), հոդված 1	Առաջարկվում է գործող օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ **որպես զանցանք նախատեսելով լրատվական գործունեություն իրականացնողի կողմից արտակարգ դրության ընթացքում սահմանված տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի**	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն և լրացում:	Ընդունվել է:

			հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով: Առաջարկվում է գործող օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին մասով. «8.1. Սույն հոդվածի 8-րդ կետով նախատեսված տույժին ենթարկվելուց հետո մեկ օրվա ընթացքում արտակարգ դրության ընթացքում սահմանված տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնների խախտմամբ տարածված հրապարակումը չվերացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:»:		

		Նախագիծ 2, հոդված 1	Լրացվող 11-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «11. Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից արտակարգ դրության ընթացքում սահմանված տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնների խախտմամբ կատարված հրապարակումը իրավասու մարմնի կողմից հրապարակման հեռացման վերաբերյալ պարտադիր կատարման ենթակա պահանջը ստանալուց հետո երեք ժամվա ընթացքում չհեռացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև	Առաջարկությունը չի ընդունվել. Նախագծից նշված մասը հանվել է:	Չի ընդունվել:

			երեքհարյուրապատիկի չափով»:		
3	**ԱԺ պատգամավոր Սերգեյ Ատոմյան**	Նախագիծ 1	Նախագծով առաջարկով 124.1-ին հոդվածը դարձնել ձևական հանցակազմ:	Առաջարկությունը չի ընդունվել. հաշվի առնելով այն, որ վարակման փաստը ենթադրում է հետևանք և հիմքում ունենալով դրա հանրային վտանգավորությունը՝ Նախագծում առաջարկվում է վարակումը դիտարկել որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ:	Չի ընդունվել:
3	**ԱԺ պատգամավոր Տարոն Սիմոնյան**	Նախագիծ 1/2	Ինքնամեկուսման կամ մեկուսացման պահանջը պետք է իրավասու անձի կողմից ներկայացված լինի, այսինքն անձը պետք է իմանա իրեն ներկայացված կանոնները, որպեսզի կարողանա վարքագիծ դրսևորել:	Առաջարկությունը չի ընդունվել. կանոնները սահմանելու լիազորությունը հստակ նախատեսված է օրենքով, ըստ այդմ՝ Կառավարությունը կոնկրետ իրավիճակում կարող է ընտրել կանոններից որևէ մեկը:	Չի ընդունվել:
4	**ԱԺ պատգամավոր Աննա Կարապետյան**	Նախագիծ 1	Առաջարկվում է 124.1-ին հոդվածում պատասխանատվություն նախատեսել հանրության	Առաջարկությունն ընդունվել է մասնակի. հոդվածը պատասխանատվություն է նախատեսում նոր	Ընդունվել է մասնակի:

			համար վտանգավոր վարակով վարակելու համար:	կորոնավիրուսային վարակով վարակելու համար:	
5	**Կառավարություն**	Նախագիծ 1, հոդված 1	Առաջարկվում է հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Հոդված 277.1. Արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում մեկուսացման կամ ինքնամեկուսացման կանոնները կամ ազատ տեղաշարժվելու իրավունքի այլ սահմանափակումները խախտելը** 1. Արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում մեկուսացման կամ ինքնամեկուսացման կանոնները կամ ազատ տեղաշարժվելու իրավունքի այլ սահմանափակումները	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագիծը խնդրո առարկա հոդվածը շարադրվել է առաջարկվող խմբագրությամբ:	Ընդունվել է:

			խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է անձի վարակում՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ առանց դրա: 2. Նույն արարքը, որն անզգուշությամբ ծանր վնաս է պատճառել մարդու առողջությանը կամ անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց վարակում՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի		

			հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա: 3. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:		

			4. Սույն հոդվածի իմաստով մեկուսացում է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումը դրա համար նախատեսված որոշակի տարածքում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը բացառելու և վարակի տարածումը կանխելու նպատակով: 5. Սույն հոդվածի իմաստով ինքնամեկուսացում է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումը իրենց մշտական բնակության կամ իր նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի տարածումը		

			կանխելու նպատակով:»:		
6		Նախագիծ 1	Առաջարկվում է նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ 124.1-ին հոդվածով, որով պատասխանատվություն կնախատեսվի դիտավորությամբ կյանքի համար վտանգավոր վարակով վարակելու դեպքերի համար. «**Հոդված 124.1. Կյանքին համար վտանագավոր վարակով վարակելը** 1. Կյանքի համար վտանգավոր վարակով վարակելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 123-րդ կամ 124-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի	Առաջարկությունն ընդունվել է մասնակի. հոդվածը պատասխանատվություն է նախատեսում նոր կորոնավիրուսային վարակով վարակելու համար: Ըստ այդմ՝ նախագծի վերնագիրը փոփոխվել է:	Ընդունվել է մասնակի:

			չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: 2. Նույն արարքը, որը կատարվել է՝ 1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ, 2) անչափահասի նկատմամբ, 3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով: 3. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝		

			պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամետով:»:		
11.		Նախագիծ 2	Առաջարկվում է. 1) ՎԻՎՕ 182.3-րդ հոդվածի 8-րդ մասում «Զանգվածային լրատվամիջոց» բառերը փոխարինել «Լրատվական գործունեություն իրականացնողների» բառերով, իսկ սանկցիան՝ վերանայել: 2) Նշված հոդվածով լրացվող 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ" «10. Արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում որպես սահմանափակում նախատեսված մեկուսացման կամ ինքնամեկուսացման կանոնները կամ ազատ տեղաշարժվելու իրավունքի	Առաջարկությունն ընդունվել է. նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ: Ըստ այդմ՝ Նախագծի վերնագիրը փոփոխվել է:	Ընդունվել է:

			այլ սահմանափակումները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհինգապատիկի չափով:»: 3) Հանել լրացվող 11-րդ մասը: 4) Լրացնել նոր՝ 11-րդ մաս, որով կտրվի «մեկուսացում» և «ինքնամեկուսացում» հասկացությունները:		
12	**ԱԺ «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» խմբակցություն**	Նախագիծ 1, հոդված 1	Նախագծում «հիվանդացում» բառը փոխարինել «վարակում» բառով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծում գործածվում է «վարակում» եզրույթը:	Ընդունվել է:
13		Նախագիծ 1, հոդված 1	Նախագծում մինչև բառից հետո «երեք» բառը փոխարինել «երկու» բառով:	Առաջարկությունն ընդունվել է մասնակի. Նախագծում կատարվել են համապատասխան	Ընդունվել է մասնակի:

				փոփոխություններ, որոնց արդյունքում Նախագծի քննարկվող հոդվածը լրացվել է նոր՝ երկրորդ և երրորդ մասերով: Ըստ այդմ՝ Նախագծով առաջարկվող հոդվածի առաջին մասի համար կալանք պատժատեսակը նախատեսվել է առավելագույնը մեկ ամիս ժամկետով:	
14		Նախագիծ 1, հոդված 1	Նախագծում «հինգ» բառը փոխարինել «երեք» բառով:	Առաջարկությունն ընդունվել է մասնակի. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ, որոնց արդյունքում Նախագծի քննարկվող հոդվածը լրացվել է նոր՝ երկրորդ և երրորդ մասերով: Պատժի համաչափության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Նախագծով առաջարկվող հոդվածի առաջին մասի սանկցիայից ազատազրկում պատժատեսակն առհասարակ հանվել է:	Ընդունվել է մասնակի:
15		Նախագիծ 1,	Նախագծի 1-ին հոդվածը	Առաջարկությունն ընդունվել է	Ընդունվել է

		հոդված 1	լրացնել նոր՝ 2-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ . «Սույն հոդվածի առաջին մասում նախատեսված արարքը, որը կատարվել է դիտավորությամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:»:	մասնակի.# առաջարկվող լրացման բովանդակությանը համապատասխան՝ Նախագիծը լրացվել է նոր՝ 124.1-ին հոդվածով, որը պատասխանատվություն է նախատեսում անձին նոր կորոնավիրուսային վիրուսով վարակելու համար:	մասնակի:
16		Նախագիծ 1, հոդված 1	Նախագծում անհրաժեշտ է սահմանել վարակումը զանգվածային համարվելու պայմանները ու առնվազն նշել, թե նվազագույնը քանի անձի վարակելու դեպքում արարքը կարող է որակվել որպես զանգվածային հիվանդացում:	Առաջարկությունն ընդունվել է մասնակի. Նախագծից «զանգվածային հիվանդացում» հասկացությունը հանվել է:	Ընդունվել է մասնակի:
17		Նախագիծ 1, հոդված 1	Նախագծում չկան «մեկուսացում» և «ինքնամեկուսացում» հասկացությունները և պահանջները, որոնց սահմանումից և հաստատումից հետո միայն	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ, որոնց արդյունքում սահմանվել են «մեկուսացում» և «ինքնամեկուսացում»	Ընդունվել է:

			հնարավոր կլինի տալ անձի արարքի քրեաիրավական որակումը:	հասկացությունները:	
18		Նախագիծ 2, հոդված 1	Նախագծում ներկայացվում է նաև պատասխանատվություն տեղեկատվության տարածման համար: Սակայն իրավական որոշակիության տեսանկյունից վիճահարույց է նաև, թե ինչ է իրենից ներկայացնում տեղեկատվության տարածումը, քանի որ ակնհայտ է, որ տեղեկատվությունը կարող է տարածվել ոչ միայն զանգվածային լրատվության միջոցներով և սոցիալական ցանցերով, այլև հասարակության շրջանակներում:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծից լրացվող իրավախախտումը հանվել է:	Ընդունվել է:
19		Նախագիծ 2, հոդված 1	Առաջարկվում է պատասխանատվություն սահմանել նաև կեղծ	Առաջարկությունը չի ընդունվել. Նախագծից լրացվող իրավախախտումը հանվել է:	Չի ընդունվել:

			տեղեկատվությունը դիտավորությամբ տարածելու համար:	Անկախ տեղեկատվության բովանդակությունից, եթե լրատվական գործունեություն իրականացնողները արտակարգ դրության ժամանակ արգելված հրապարակումներ կամ հաղորդումներ թողարկեն, ապա կենթարկվեն պատասխանատվության:	
20	**ԱԺ ԼՀԿ խմբակցություն**	Նախագիծ 1, հոդված 1	*Նախագծի* 1-ին հոդվածում՝ 1. Առաջարկում ենք հստակեցնել, թե ինչ իրավական ակտով են սահմանվում արտակարգ իրավիճակի հիմքով արտակարգ դրության ժամանակ մեկուսացման կամ ինքնամեկուսացման պահանջները՝ նախատեսելով, որ այդ պահանջները պետք է կրեն իմպերատիվ բնույթ՝ համապատասխան նորմատիվ կամ անհատական իրավական ակտով ընդունված լինելու ուժով: Այս պահանջը կարող	Առաջարկությունն ընդունվել է մասնակի. Նախագիծը լրացվել է նոր՝ 124.1-ին հոդվածով, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում նոր կորոնավիրուսային վարակով վարակելու համար: Նախագծով լրացվող 277.1-ին հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ:	Ընդունվել է մասնակի:

			է լրացվել որպես Օրենսգրքի 277.1-ին հոդվածի վերջին մաս՝ «Արտակարգ իրավիճակի հիմքով արտակարգ դրության ժամանակ *իրավասու մարմի կողմից ընդունված* մեկուսացման կամ ինքնամեկուսացման *գրավոր* պահանջները խախտելը (…)»: 2. Առաջարկում ենք որևէ եղանակով հստակեցնել «զանգվածային» տերմինը, քանի որ այստեղ առկա է իրավական որոշակիության խնդիր, ինչը մի կողմից՝ խնդրահարույց է հոդվածի սահմանադրականության տեսանկյունից, մյուս կողմից՝ թույլ է տալիս իրավակիրառ մարմնի լայն հայեցողության հնարավորություն, ինչը հատկապես քրեական		

			իրավունքում անթույլատրելի է: 3. Առաջարկում ենք «մարդկանց զանգվածային հիվանդացում» արտահայտության մեջ օգտագործել ոչ թե «հիվանդացում», այլ «վարակում» բառը, քանի որ հիվանդանալը միշտ չէ, որ ենթադրում է վարակում: «Վարակել» տերմինն այստեղ շատ ավելի տեղին է և հստակ ու սպառիչ նկարագրում է հանցակազմի օբյեկտիվ կողմի համապատասխան տարրը՝ հետևանքը: 4. Առաջարկում ենք սանկցիայի վերին շեմը 5 տարվա փոխարեն սահմանել 3 տարի՝ հաշվի առնելով նաև, որ մեր կողմից ներկայացված առաջարկների դեպքում առավել ծանր պատասխանատվություն		

			կնախատեսվի դիտավորյալ մեղքի ձևի, ինչպես նաև ծանր հետևանքների համար: 5. Նախագծով անտեսվում է մեղքի դիտավորյալ ձևը, ընդ որում՝ որպես լրացում առաջարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմը դիտավորությամբ դրևորվելու դեպքում Օրենսգրքի այլ հոդվածներով հնարավոր չէ արարքը հստակ որակել: Ըստ այդմ՝ առաջարկում ենք նույն հոդվածում լրացնել նոր մաս, որն ավելի խիստ պատասխանատվություն կնախատեսի նույն արարքը դիտավորությամբ կատարելու համար: 6. Առաջարկում ենք հոդվածը լրացնել արարքը որակյալ դարձնող ևս մեկ մասով: Մասնավորապես՝ առաջարկում ենք ավելի		

			խիստ պատասխանատվություն սահմանել այն դեպքերի համար, երբ արարքի հետևանքով անզգուշությամբ կամ դիտավորությամբ առաջացել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանքներ: Ընդ որում՝ այստեղ անհրաժեշտ է կիրառել սանկցիայի վերին և ստորին շեմերի համեմատաբար մեծ տարբերություն, որը հնարավորության կտա ավելի խիստ պատասխանատվության ենթարկել սուբյեկտիվ կողմից արարքը դիտավորությամբ դրսևորվելու պարագայում, ինչպես նաև՝ կախված արարքի հետևանքների մասշտաբայնությունից:		
21		Նախագիծ 2	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետում առաջարկում ենք լրացնել հետևյալ	Առաջարկությունը չի ընդունվել. Նախագծով չի նախատեսում ավելի լայն սահմանափակումներ,	Չի ընդունվել:

			բովանդակությամբ նոր նախադասություն՝ «Սույն նորմը չի կարող մեկնաբանվել ի վնաս խոսքի ազատության ողջամիտ սահմանների:»:	քան գործող կարգավորումն է: Ըստ այդմ՝ լրացում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:	